

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 203-Ա

21 հուլիսի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 14-ի N 1822-Ա, N 1828-Ա, N 1847-Ա, N 1854-Ա, N 1856-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի հուլիսի 16-ին, 19-ին և 20-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
 - 1) «Նոր-Ջովք» ՍՊԸ՝ ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 55/15.
 - 2) «Քնարիկ Թեմուրյան» Ա/Ձ՝ ք. Աշտարակ, Նարեկացի 122.
 - 3) «Կապանի Ջրաղվածության տարածքային կենտրոն»՝ ք. Կապան, Երկաթուղայիններ 2/2.
 - 4) «Ֆիլդ Ֆարմ» ՍՊԸ՝ ք. Կապան, Շահումյան 4/16.
 - 5) «Սյուզաննա Կարապետյան» Ա/Ձ՝ ք. Ագարակ, Չարենցի 23.
 - 6) «Արմենուի Գրիգորյան» Ա/Ձ՝ ք. Ագարակ, Չարենցի 21/55.
 - 7) «Սիրուշ Համբարձումյան» Ա/Ձ՝ ք. Ագարակ, Չարենցի 23/42:
2. 48 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
 - 1) «Անյա Թումանյան» Ա/Ձ՝ ք. Ագարակ, Չարենցի 22/37.
 - 2) «Կարինե Մելքոնյան» Ա/Ձ՝ ք. Ագարակ, Չարենցի 8.
 - 3) «Ալետա Կարապետյան» Ա/Ձ՝ ք. Ագարակ, Չարենցի 22/16:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
4. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 21/07/20 18:27:27 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ